

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«\_\_\_» \_\_\_\_\_ 2019թ.

N-----Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ  
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով`

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Օ. Իսակովի պող. 36/4 շենքի հ. 20` 40.8 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.16072013-01-0005 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անահիտ Մամվելի Խաչատրյանին և Արման Արմենի Հունանյանին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Օ.Իսակովի պող. 36/4 շենքի հ.20՝ 40.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (սվիթչել) Անահիտ Մամվելի Խաչատրյանին և Արման Արմենի Հունանյանին:

Օ. Իսակովի պողոտայի հ.36/4 շենքի հ.20 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.16072013-01-0005 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևանի քաղաքապետի 20.01.1998թ. հ.12 որոշմամբ՝ Բ-2 թաղամասի հ. 74 շենքի 1-ին հարկի ոչ բնակելի տարածքը վարձակալական հիմունքներով տրամադրվել է անհատ ձեռներեց Անահիտ Խաչատրյանին: Տարածքին՝ Երևանի քաղաքապետի 02.06.2011թ. հ.2272-Ա որոշմամբ տրամադրվել է Օ. Իսակովի պողոտայի հ.36/4 շենքի հ.20 հասցեն: Անահիտ Խաչատրյանը իր անձնական միջոցների հաշվին տարածքը հիմնանորոգել է որպես բնակարան և իր որդու՝ Արման Հունանյանին հետ փաստացի բնակվել և հաշվառվել է քննարկվող բնակարանում, /հիմք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մալաթիայի անձնագրային բաժանմունքի 22.08.2019թ. հ.22/6-4074 գրություն, «Արմեն-19» համատիրության 4.09.2019թ. և 11.09.2019թ հաստատված տեղեկանքներ, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով վերջիններս հնարավորություն չեն ունեցել այն մինչ օրս սեփականաշնորհել:

Կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 05.09.2019թ հ.ԱՏ-05092019-99-0171264 տեղեկանքի համաձայն՝ Անահիտ Խաչատրյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև վերջին 5 տարվա ընթացքում ՀՀ տարածքում վերջինիս կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, իսկ Արման Հունանյանի անվամբ գրանցված է Գ.Արծրունու փողոցի հ.90 շենքի հ.53 բնակարանի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունք 1/5 բաժնեմասով:

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Օրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ 4-րդ կետի:

Օրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի /Օրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ  
ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**